



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
ՈՐՈՇՈՒՄ**

--- ապրիլի 2018 թվականի №---Ն  
ք. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 31-Ի №218Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 31-ի «Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման, էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրերի օրինակելի ձևերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» №218Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի օրինակելի ձևում (այսուհետ՝ Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.
  - 1) Պայմանագրի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
 

«4. Մատակարարը էլեկտրական ցանցին միացումն ապահովում է Կանխավճարի վճարմանը հաջորդող \_\_\_\_\_ օրվա ընթացքում, իսկ ԷՄՕԿ-ով սահմանված 0,22կՎ կամ 0,4կՎ լարմամբ պարզեցված միացման դեպքում՝ \_\_\_\_\_ օրվա ընթացքում (նշված ժամկետները չեն կարող գերազանցել ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետները):».
  - 2) Պայմանագիրը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1 կետով.

«4.1. ԷՄՕԿ-ով սահմանված բարդ ընթացակարգով էլեկտրական ցանցին միացման դեպքում միացումը կատարվում է համաձայն սույն պայմանագրի №2 հավելվածով սահմանված տեխնիկական պայմանների և (կամ) №3 հավելվածով սահմանված էլեկտրամատակարարման միագիծ սխեմայի:».

3) Պայմանագրի 8-րդ կետի 1-ին ենթակետում «4-րդ կետի» բառերը փոխարինել «4-րդ և 4.1 կետերի» բառերով, իսկ 3-րդ ենթակետում «նախատեսված դեպքում» բառերը՝ «և ԷՄՕԿ-ով նախատեսված դեպքերում» բառերով.

4) Պայմանագրի 55-րդ կետում «փոխադարձ համաձայնությամբ» բառերից հետո լրացնել «, այդ թվում՝ ԷՄՕԿ-ով նախատեսված դեպքում» բառերը.

5) Պայմանագրի 61-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում «հավելվածը» բառից հետո լրացնել «(ԷՄՕԿ-ով սահմանված բարդ ընթացակարգով էլեկտրական ցանցին միացման դեպքերում)» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ**

ք. Երևան  
-- ապրիլի 2018թ.